Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«28» նոյեմբերի 2022 թ. թիվ 174 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

_____ Ա. Սարգսյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԴԱՍՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ

(Նոր խմբագրությամբ)

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման (այսուհետ՝ ուսանողական հարցման) կանոնակարգը սահմանում է ԳԿՄԿ մագիստրանտների կողմից Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:

1.2. Ուսանողական հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի և ԳԿՄԿ կանոնադրության պահանջների հիման վրա և համարվում է ԳԿՄԿ մագիստրանտների ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:

1.3. Կանոնակարգը և դրա փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Կենտրոնի գիտական խորհրդի կողմից:

2. Ուսանողական հարցման անցկացումը

2.1. Առկա ուսուցման համակարգում ուսանողական հարցումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, հեռակա ուսուցման համակարգում՝ նախորդ ուստարվա տվյալների հիման վրա: Ավարտական կուրսերում 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցումն իրականացվում է քննաշրջանի ավարտից հետո՝ մինչև մագիստրոսական թեզի պաշտպանության սկիզբը:

2.2. Ուսանողական հարցումն իրականացվում է ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի կողմից:

2.3. Ուսանողական հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (Հավելված 1), որում ուսանողը 5 միավորից բաղկացած սանդղակով գնահատում է առաջադրված հարցերը կամ առաջարկվող տարբերակների միջոցով արտահայտում է իր կարծիքը:

2.4. Գնահատման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր դասախոսի (դասընթացի) համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով[1]:

2.5. Ուսանողական հարցումն անանուն է:

2.6. Ուսանողական հարցումն անց է կացվում կրթության որակի ապահովման բաժնի կողմից սահմանված և ամբիոնների կողմից նախապես ներկայացված ժամանակացույցի համաձայն՝ հարցմանը խմբի ուսանողների առնվազն 51%-ի մասնակցության պայմաններում:

2.7. Հարցումն իրականացվում է էլեկտրոնային տարբերակով:

3. Ուսանողական հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1. Ուսանողական հարցման արդյունքները մշակվում են ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնում:

3.2. Ուսանողական հարցման արդյունքները 5 տարի, իսկ գնահատված հարցաթերթերը 3 տարի պահվում են ԳԿՄԿ էլեկտրոնային բազայում:

4. Ուսանողական հարցման արդյունքների օգտագործումը

4.1. Ուսանողական հարցման արդյունքները կրթության որակի ապահովման բաժինը ներկայացնում է համապատասխան ամբիոն, իսկ յուրաքանչյուր առանձին դասընթացի գնահատման արդյունքները տրամարդվում են համապատասխան դասախոսին՝ էլ փոստով: Ահրաժեշտության դեպքում հարցման արդյունքները ներկայացվում են նաև այլ ստորաբաժանումներ:

4.2. Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնում: Ուսանողների գրավոր կարծիքները քննարկվում են ամբիոնի նիստում: Քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ՝ ուղղված դասախոսի դասավանդման որակի բարելավմանը:

[1] Միջին թվաբանականը հաշվարկվում է ըստ առանձին դասընթացների և հարցերի, որի բարձր արժեքը մատնանշում է տվյալ դասախոսի բարձր վարկանիշը հարցման մասնակիցների տվյալ խմբում:

4.3. Ամբիոնի վարիչը պարտավոր է կազմակերպել հարցման արդյունքների քննարկում դասախոսների և ուսանողների շրջանում՝ մեկ ամսվա ընթացքում: Դասախոսն իրավունք ունի ամբիոնի վարիչի ներկայությամբ ծանոթանալու հարցման՝ իրեն վերաբերող կարծիքներին:

4.4. Ուսանողական հարցման անհատական արդյունքները հրապարակվում են միայն տվյալ ամբիոնում:

4.5. Ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվում են՝

• աջակցելու դասախոսներին՝ վերլուծելու, զարգացնելու իրենց դասավանդման մոտեցումները և կիրառվող մեթոդներն ու գործիքները,

• դասախոսների պաշտոնակալման, առաջխաղացման և խրախուսման նպատակով:

Հավելված 1.

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Ամբիոն

Մասնագիտություն (առկա/հեռակա) Կուրս, կիսամյակ

Սիրելի՛ ուսանող,

Դուք մասնակցում եք դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժնի կողմից պարբերաբար անցկացվող ուսանողական հարցմանը: Ձեր անկեղծ և օբյեկտիվ գնահատականներն ու կարծիքները կնպաստեն ուսումնական գործընթացի՝ էլ ավելի արդյունավետ կազմակերպմանը: Հարցումն անանուն է և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով:

Խնդրում ենք 1-5 բալանոց սանդղակով գնահատել հետևյալ կետերը, որտեղ 1-ը ամենացածր գնահատականն է, իսկ 5-ը՝ ամենաբարձր:

1. Տրամադրում էր անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութեր:	1	2	3	4	5	Չի դասավանդել
2. Նյութը մատուցում էր պարզ և հասկանալի:	1	2	3	4	5	Չի դասավանդել
3. Կառավարում էր ժամանակը և արդյունավետ օգտագործում:	1	2	3	4	5	Չի դասավանդել
4. Ուսանողներին հնարավորություն էր տալիս իրեն դիմել լսարանից դուրս՝ դասընթացին առնչվող հարցերով:	1	2	3	4	5	Չի դասավանդել
5. Խրախուսում էր ինքնուրույն աշխատանքը:	1	2	3	4	5	Չի դասավանդել
6. Օբյեկտիվ էր գնահատում ուսանողների գիտելիքները:	1	2	3	4	5	Չի դասավանդել
7. Բարյացակամ էր և հարգալից ուսանողների հանդեպ:	1	2	3	4	5	Չի դասավանդել
8. Դասընթացը հնարավորություն է տվել ձևավորել հետազոտական հմտություններ:	1	2	3	4	5	Չի դասավանդել
9. Ընդհանուր առմամբ որքանո՞վ էր օգտակար դասընթացը:	1	2	3	4	5	Չի դասավանդել

10. Որքա՞ն էր ուշանում դասերից.

- Ընդհանրապես չէր ուշանում
- Մինչև 5 րոպե
- 5-15 րոպե
- 15րոպեից ավել
- Դժվարանում եմ պատասխանել
- Չի դասավանդել

11. Կցանկանայիք մասնակցել տվյալ դասախոսի կողմից դասավանդվող մեկ այլ դասընթացի:

- Այո
- Ոչ
- Չի դասավանդել

12. Գնահատեք Ձեր ամբիոնի վարիչի՝ ուսանողների հետ տարվող աշխատանքը:	1	2	3	4	5
13. Գնահատեք Ձեր ուսումնական խորհրդատու (ների)՝ ուսանողների հետ տարվող աշխատանքը:	1	2	3	4	5

Առաջարկություններ և մեկնաբանություններ

_____

_____

_____

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու և մեզ աջակցելու համար: